ԱՐԱՄ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ծնվել է 1894թ., Էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղում: Աշխատել է Սուխումի օկրուգի Աթարա գյուղի հայկական դպրոցում (1917-1918), իսկ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ հայկական դիվիզիայի քաղբաժնում:

1921թ. մայիս-սեպտեմբերին եղել է Էջմիածնի գավառի հեղկոմի նախագահի տեղակալը, ապա՝ ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմատի կազմակերպական-վարչական վարչության պետը, ժողկոմի տեղակալը:

1924թ. նոյեմբերի 11-ից մինչև 1928թ. հունիսի 30-ը Երևան քաղաքի և գավառի խորհուրդների նախագահն էր: Մահացել է 1937թ.: